ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլ ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 19060.0 մլն դրամ՝ պլանավորված 18222.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 4.6 տոկոսով կամ 838.0 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 98 տոկոսով կամ 9434.0 մլն դրամով, որից 8129.2 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Ապրիլ ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 7771.8 մլն դրամ՝ պլանավորված 7522.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 3.3 տոկոսով կամ 249.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ շուրջ 2.5 անգամ կամ 4619.5 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 111 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 7 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 28 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 32.4 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 23 ստուգում՝ 32.0 մլն դրամ գումարով:

Հաշվետու ամսում կատարվել են թվով 80 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 65-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 4-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 5 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 12 վարչական գործ՝ 8.8 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 5 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 2.7 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 76 վարչական գործով սահմանվել է 1.1 մլն դրամ վարչական տուգանք:

Հաշվետու ամսում հարուցվել է 2 քրեական գործ, որոնցով պետության հասցված վնասը կազմել է շուրջ 6.5 մլն դրամ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 11606 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 10071:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 227 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 97 վարձու աշխատողի՝ 14.0 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 49 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամաններով հաստատվել են «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածից բխող արձանագրությունների և երաշխիքի ձևերը, փոփոխություններ կատարվել մի շարք հանձնաժողովների կազմերում:

ՀՀ և ԱՀ ֆինանսների նախարարությունների համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում երկօրյա այցով Արցախ է ժամանել ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Դավիթ Անանյանի ղեկավարած պատվիրակությունը, որի ընթացքում հարկային մարմնի կենտրոնական աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ քննարկվել է ՀՀ-ում 2018 թվականի հունվարի 1-ից կիրառության մեջ դրված Հարկային օրենսգրքի կարևոր դրույթները, երկարաժամկետ հատվածում ակնկալվող ազդեցությունը գործարար միջավայրի և պետական բյուջեի վրա: Համաձայն աշխատանքային ծրագրի՝ Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի խորհրդի նախագահի գլխավորությամբ կազմակերպվել են նաև դասընթացներ հանրային հատվածի հաշվապահների համար:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև

հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Փոքր ու միջին ձեռնարկատիրության ոլորտում առկա խնդիրների քննարկման նպատակով հաշվետու ամսում ԱՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի ու Արցախի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ասոցիացիայի նախագահի ղեկավարությամբ հանդիպում է կազմակերպվել ասոցիացիայի ներկայացուցիչների և հարկային մարմնի ղեկավար անձնակազմի մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում ոլորտի ներկայացուցիչների կողմից բարձրացվել են մի շարք հարցեր՝ կապված էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ընդլայնման, նորաստեղծ հարկ վճարողների համար սահմանված հարկային արտոնությունների, տարբեր ոլորտների մասով գործող հարկագանձման մոտեցումների հետ:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները: «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել են նաև առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Ապրիլի 6-20-ը կազմակերպվել են հարկային ծառայության «Գ» և «Դ» խմբերի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար բաց և փակ մրցույթներ (այդ թվում՝ կրկնակի), որոնց արդյունքում հաղթող ճանաչված 6 մասնակիցներ նշանակվել են հարկային ծառայության պաշտոնների:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 239, ելքագրվել՝ 168 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 5 գրություն: